

ԻՐԱՎՈՒՆԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Ա. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1896

ԹԻԻ 24

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Հերկայ 1896 տարեկանի
Պոչկարիոյ համար տարեկան 8 ֆր
" " 1/2 " 4 "
" " 1/4 " 2 "
Արտատպանի համար " 10 "
" " 1/2 " 5 "
Կանխիկ վճարելի

Համակ դրամ եշայն խրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱՎՈՒՆԿԻՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
ես լին զրկուիր եւ յարեալ դատ-
նաճնէրն միայն կը հրատարակ-
ուին անբողոքի կամ մասամբ:
Ծանոցմանց տողը 20 սանթիմ.
երեքէն աւելի անգամներու համար
20 աւ 100 գեղջ կը լինի:

ՀԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ
ՄԷՋ

Հոկտ. 22/ նոյեմ. 3 ին Հայկական
խնդիրը Ֆրանսայի երեսփոխանա-
կան ժողովին վիճարանութեան ա-
ռարկայ եղաւ: Վեց երեսփոխան-
ներու կողմէն երեք հարցապնդում-
ներ ուղղուեցան կառավարութեան:
Առաջին խօսողն եղաւ աշակողման
երեսփոխան Պ. Տընիս Գօշէն, որ
Հայ ժողովուրդին տառապանաց
երկար շարքերը յիշելէ յետոյ՝
յայտարարեց թէ 1878 էն, այսինքն,
այն ժամանակէ ի վեր, ուր Եւրոպա
ստանձնեց Հայ ազգին պաշտպա-
նութիւնը, Հայերը կրեցին ինչ որ
կրնայ մարդկային ցեղ մը կրել ա-
ռանց բնաջինջ ըլլալու: Հայ յիզա-
փոխական շարժումներու մասին Պ.
Գօշէն ըսաւ:

«Հայերուն դէմ մեծագոյն ա-
ռարկութիւնը եղած է զանոնք ներ-
կայացնել իրր յեղափոխական, ան-
իշխանական, սննդական մարդիկներ,
որոց դէմ հարկ էր խտտութիւններ
ձեռք առնել: Ոչ ոք կրնայ կաս-
կածիլ թէ ես յեղափոխականնե-
րուն համար խանդաղատանք զգամ:
Բայց ես կը կարծեմ թէ կառա-
վարութիւնները կը հնձնեն, ինչ որ
սերմանած են. եթէ անոնք խաղա-
ղութիւն կ'ուզեն, պէտք է որ իրենք
օրինակ ըլլան բարութեան և վրա-
տահութեան. սակայն երբ կը թո-
ղուն որ սարսափ տիրէ, իրենք
պատրաստած կ'ըլլան ապստամբու-
թիւնը: Երբ Մօնթալանպէր մոտ-
նանիշ կ'ընէր Կալիցիոյ շարքերը,
ըսաւ -- երբ զարմանալի բան մը
կայ, աւ է որ բոլոր շինարարք
մոլեգին կատաղիներ չորանան --:
Ես ալ նոյնը կ'ըսեմ Հայերուն
համար

Առնալիս ցոյց առաւ թէ
Հայերը շարժուեցան կանոնաւորա-
պէս, զինուորական փողի ձայնով,
պաշտօնեաներու ուղղութեան տակ
և թուրք կառավարութեան վատ
դատակցութեամբ:

Թէեւ ես կը խոստովանի թէ միջ-
ազգային խնդիրները շատ խճող-
ուած են, սակայն կը կարծէ թէ
«կան ազգեր, որ կարող են չհե-
տելի միայն իրենց անմիջական

չահերուն. եթէ այս բանը ա'լ չենք
կրնար ըսել Ֆրանսայի համար,
պէտք է շնչել անոր պատմութեան
մէկ մասը»:

Պ. Գօշէն վերջացուց իր խօսքը
հետեւեալ կերպով:

«Մեր գաշնակիցներուն խօսքը
ըրի. իրաւունք ունիմ հպարտու-
թեամբ և հայրենասիրական մեծ
ուրախութեամբ խօսելու այն հաս-
տատուն բարեկամութեան վրայ,
որ վերջերս հռչակուեցաւ հանդի-
սապէս. ժամէ արդ կոչում ընելու
այդ բարեկամութեան. Ֆրանսայի
բարեկամութիւնը թանկագին է,
բայց պարտաւորութիւններ ալ կը
զնէ մեր բարեկամներուն վրայ. և
այդ պարտիմք ըսել մեր բարե-
կամներուն:

Այս պարտականութեանց առա-
ջինն ու ամենէն նուիրականն է
հասկնալ Ֆրանսայի գաղափարային
վիճանականութիւնները և մաս-
նակցիլ անոնց. երբ Ֆրանսա կո-
չում կ'ընէ վիճանական զգացումներու,
իր բարեկամներուն պարտքն է իր
հետ պաշտպան ըլլալ տկարներուն,
ճնշեալներուն և վերահաստատել
արդարութիւն:

Ասոնք են ահա այն պարտակա-
նութիւնները զոր Ֆրանսայի բա-
րեկամութիւնը կը զնէ ուրիշներուն
վրայ և զայս կրկնեցէք մեր բա-
րեկամներուն, Պ. նախարար»:
(սասաիկ ծափ):

Երկրորդ խօսողն եղաւ կոմս Թը
Մէն որ գաղափարաւորաց Եւրոպա-
յի անգործութիւնը և յայտարա-
րեց թէ ամբողջ պատասխանատու-
ութիւնը կը ծանրանայ թուրք
կառավարութեան վրայ, որոյ գոր-
ծակատարները կաղմակերպեցին և
զեկավարեցին շարքերը: Եւրոպա
ձայն չհանց, միայն Անգլիացիք
զայլույթ յայտնեցին իրենց մի-
թիւններով, սակայն անոնց ցոյ-
ցին ալ աւելի փաստեցին հայկա-
կան դատին, ամեն տեսակ կաս-
կածներ և նախանձ յարուցանելով:

Պ. Թը Մէն չկարծէր որ կա-
րելի ըլլայ գտնել խնդրոյն մէկ
արմատական լուծումը, քանի որ
թուրքիոյ ամբողջութեան պահ-
պանութիւնը անհրաժեշտ է Եւրո-
պայի խաղաղութեան համար,
բայց կարելի է գտնել երկրին քը-
րիստոնեաներուն ապահովութիւնը
երաշխաւորել և այս Եւրոպայի և

մասնաւորապէս Ֆրանսայի պարտքն
է:

Պ. Հիւպար ալ քանի մը խօսք
ըսաւ խնդրոյն վրայ, Բայց աւելի
Անգլիան հարուածեց, քան Հայե-
րը պաշտպանեց և շատագոյնեց
այն շահագիտական քաղաքակա-
նութիւնը, որ կը գործէ միայն
երկրին օգուտը իրեն նպատակա-
կէտ ունենալով:

Այնուհետեւ խօսեցաւ արտա-
քին գործոց նախարար Պ. Հան-
թօ որ Հայաստանի վրայ քանի մը
տեղեկագրական ծանօթութիւններ
տալէ յետոյ, ըսաւ թէ ներկայ
կացութեան պատճառներն են Եւ-
րոպայի հետ չփոխելով Հայոց մէջ
ծնած աղատութեան սէրը, Քիւր-
տերու հարստահարութիւնները և
օսմ. վարչութեան ծայրայեղութիւն-
ները, որոնք օրինաւոր բողոքնե-
քաւ առիթ տուին: Ապա եկան կո-
տորածները: Եւրոպա անգղայ չի
մնաց, բանակցութիւններ կատա-
րուեցան, որոնք գէթ սա արդիւնքն
ունեցան որ տէրութիւնները հե-
տեւեալ երեք կէտերը իրր սկզբ-
ունքը ընդունեցին խնդրին լուծ-
ման համար. 1. գործել անկեղծ և
հաստատուն համաձայնութեամբ,
2. արգելիլ ո և է առանձին գոր-
ծողութիւն մէկ տէրութեան կող-
մէն, 3. պահպանել օսմ. կայսրու-
թեան և գաշնադրերով հաստատուող
կացութեան ամբողջութիւնը:

Յետոյ նախարարը աւելցուց.

«Օգտակար կը գտնեմ այստեղ
յայտնել թէ Չարին ճամբորդու-
թեան այնքան արդիւնաւոր հե-
տեւանքներէն մին եղաւ երկու տէ-
րութեանց միջև որոշ կարծիքնե-
րու փոխանակութիւն մը, որով ե-
րեւան եկաւ թէ երկու կողմերուն
չահերը և տեսութիւնները իրարու
համաձայն էին և վստահ ենք որ
չափաւորութեամբ, արգարութեամբ
և ամեն տէրութեանց շահերուն
նկատառութեամբ շարժելով կարն-
լի պիտի ըլլայ լուծում մը գտնել
որ համապատասխանէ թէ՛ միւս
կառավարութեանց փափաքներուն
և թէ՛ Արեւելքի այժմեան կացու-
թեան պէտքերուն:

Միացեալ Եւրոպա յուսարի է որ
պիտի կրնայ իր խօսքը մտիկ ընել
տալ. պիտի զգուշացնէ Սուլթանը
աղեկարար ազգեցութեանց դէմ:
պիտի կրնայ անոր ապացուցանել
թէ խնդիրը իր կայսրութեան այս-
ինչ կամ այնինչ մասը կամ այսինչ
կրօնը նպատաւորելու վրայ չէ,
այլ թէ բոլոր բնակիչները, կա-
թոլիկները, Հայերը, օրթօտօքս-
ներն ու իսլամները, միեւնոյն չա-
րիքներէ կը նեղուին և միեւնոյն

բարեբուծները կը պահանջեն. Եւ-
րոպա Սուլթանին պիտի ցուցնէ
ուր որ է չարեաց աղբիւրը, այսինքն,
երկրին քաղաքական և եկեմտական
յոռի վարչութեան մէջ. պիտի ա-
ռաջարկէ իրեն միջոցներ կարգ ու
կանոն վերահաստատելու, առանց
որոց պետութիւնները չեն կրնար
տեւել. պիտի պահանջէ իրմէ իր
խոստումներուն, իր ընդունած բա-
րենորդութիւններուն գործադրութիւ-
նը, անոնց կիրառութիւնը նաեւ
ամեն ուրեք, ուր հարկաւոր են.
պիտի պահանջէ որ գաղբին բուռն
ճնշումները, բացուին բանտերու
զոնները և նպատակներ հասնին ամե-
նամեծ կարօտութեամբ տառա-
պոլներուն: Տէրութիւնները, ի
հարկին մեծագոյն աղբուրութեամբ
նաեւ պիտի յեղ յեղին Սուլթանին
թէ եւրոպական գաղութներուն
գոյութիւնը իրեն յանձնուած է և
ինքն է պատասխանատու այդ մա-
սին, թէ ինք ոչ միայն իր բոլոր
հպատակներուն, այլև իր երկրին
մէջ ապրող օտարականներուն հան-
գէպ պարտական է պահպանել հան-
րային ապահովութիւնը, խաղա-
ղութիւնը և կարգն ու կանոնը.
վերջապէս պիտի ապացուցանենք
իրեն թէ այս է միակ քաղաքակա-
նութիւնը, ուր պէտք է փնտռել
երկրին պատիւն ու փրկութիւնը.
(ծափահ):

Պ. ժօրէս, ընկերվարական երես-
փոխան, իր սովորական ուժգնու-
թեամբ կը նետուի պայքարին մէջ.
Նա ընաւ յոյս չունի որ Սուլթանին
ուղղեալ դիտողութիւնները կրնան
արդիւնք մը ունենալ. իր կարծիքով
որքան թուրքիա, նոյնքան Եւրո-
պա յանցաւոր է. առեւտրանք ջար-
դերուն մէկ սոսկալի նկարագիրը
կ'ընէ և կը յայտարարէ թէ թուր-
քիոյ հետ մեղաակից են Անգլիան,
Ֆրանսան և բնականաբար նաեւ Ֆրան-
սա, որոյ քաղաքականութիւնը
հիմնուած է ուսւ քաղաքականու-
թեան վրայ: Մէկ խօսքով այս ա-
մէն դէպքերը, կը յարէ Պ. ժօրէս,
կը ցուցնեն թէ «Ֆրիստոնեայ, կա-
ռավարական Եւրոպան անանկացած
է» և թէ պէտք է որ աշխարհի
բոլոր աշխատաւորները ջանան ի-
րենց միութեամբ հաստատելու տի-
եղեղական եղբայրութիւնն ու բա-
րեկեցութիւնը:

Վերջապէս առաջարկեալ երեք
բանաձևերէն միայն հետեւեալը
ընդունուեցաւ 90ի դէմ 402 քուէով.
Ճողովը հաշտութեան տալով
կառավարութեան յայտարարու-
թեանց, կ'անցնի օրակարգին միւս
խնդիրներուն:

ՊԱՐՈՆ ԱՆԱԹՕԼ
ԼԸՐՈՒՄ-ՊՕԼԻՏԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Յրանսական կոմիտեն այս հռչակագրով անդամը Չորին ճամբորդութեան ուղիքով Ռաշիտ տե տեւանտի մէջ հրապարակած է նշանաւոր յօդուած մը, ուր հեղինակին գիտութիւնը, անկողմնակալ ոգին, անկեղծութիւնը, վնասն՝ նուիրելուն ու հայրենասիրութիւնը կը փայլին իր մարդասիրութեան հետ, որ կը թելադրէ զինքը եւրոպական ընդհանուր քաղաքականութեան և Յրանսայի եական շահերուն նուիրելու իր բարձր տեսութեանց մէջ մտնելու նաև հայկական խնդիրը, որուն պաշտպանութեան ուրիշ առիթներով ալ ընծայած է իր խօսքին մեծ հեղինակութիւնը:

Յրանսագէտ ազգայններուն կը յանձնարարենք կարգաւ Պ. Պօլիէօի յօդուածը, որոյ արեւելեան խնդրոյն վերաբերեալ մասէն կը քաղենք հետևեալը:

— Մենք Յրանսացիքս, որ այնքան ժամանակ առաջին ազգն էինք խաչակրութեան երկիրներուն մէջ, գուցէ աւելի մեր սնահաղան սխալներուն պատճառով քան մեր մրցակիցներուն շնորհիւ, իջանք երկրորդական աստիճանի. այս ալ ոչ նուազ փառաւոր մի մասն է նախկին Յրանսայի այն ժառանգութեան որ ըստ երեւոյթին կորսնցնելու վրայ ենք: Եւ սակայն մեր հիւպատոսներուն և միսիոնարներուն ստիպողական թախանձանքները չեն որ կը պակսին մեզ: Արդէն Արեւելք մեր նսնայման կամ լուրջեան վրայ զարմացած կը վարժուի գէշ ուրիշները դարձնել իր նայուածքները և յոյսը:

Թերեւս նոր առիթ մը ունենք այն երկիրներու մէջ, զոր այնչափ անգամ մեր խորհուրդներով և մեր զէնքերով խաղաղեցուցած ենք, Յրանսայի անունը օրհնել տալու, եթէ ոչ ուրիշ կերպով, գոնէ մեր ուսու բարեկամներուն և անգլիացի գրացիներուն միջեւ միջնորդի դեր մը կատարելով՝ մոլորանքներու ետեւումնէն ազատելու համար Ասիոյ քրիստոնեաները: Անարգար չըլլանք մենք մեզ գէմ. անցեալ աշուն այսպիսի ջանք մը ընել փորձեցինք, սակայն չյաջողեցանք: Այնպէս յուսախաբութիւն մը ունեցաւ տեսնելով որ արտաքին երեւոյթով միացած Յրանսա, Ռուսիա և Անգլիա, անկարող եղան խողխողողներու բազմազան կասեցնելու կամ զանաւոր պատժելու:

Յանցանքը, պիտի սրման Անգլիացիք, Ռուսիոյ է, որ անհաւատարիմ գտնուեցաւ իր վաղեմի պաշտօնին, յանցանքը նոյնպէս Յրանսայինն է որ Ռուսիոյ հաճոյանալու համար մոռցաւ իր դաւաճող աւանդութիւնները: Այսպէս կը գտնեն Անգլիացիք, որ սովորութեան համեմատ, կուզեն միայն

գրացիին աչքին մէջ չիւղը տեսնել: Յանցանքը, ահա, տէրութեանց փոխադարձ անվստահութեանն է, որոց Անգլիացիք անգիտանալ կը կեղծեն թէ Անգլիա այնքան անուղի մատակարարած է միշտ: Եթէ իրենք չեն յիշեր, ուրիշները կը մտաբերեն թէ անգլիական քաղաքականութիւնը ինչ արարքներ ունեցաւ Կիպրոսի, Եգիպտոսի և Սուտանի մէջ, թողունք հրովարտական ընկերութեանց անուղղամտութիւններն ու այլաբան գործերն թրանսպարէն մէջ և նիկէրի ափունքին վրայ: Եթէ կառավարութիւնները Անգլիոյ քաղաքականութիւնը արդարապէս չեն դատեր, պատճառն այն է որ այդ քաղաքականութեան անցեալը կարգարարնէ ամեն տեսակ կասկածներ: Երբ Անգլիա իրեն սովորական չիւղը նոր եւանդով մը երեւան ելաւ իբր պաշտպան տնարգ հօտի մը նման մարթութեամբ քրիստոնէից, ուրիշ ազգեր և ամենէն առաջ Ռուսիա, որք սովորած չէին Անգլիական դաշլիճը այնքան հոգատար տնտեսլ Սուլթանին քրիստոնեայ հպատակներուն ապահովութեան մասին, սկսան հարցնել թէ արդեօք Անգլիա ինչ նոր մեք նայուածքներ կը պատրաստէ, ուրիշ ո՞ր կիպրոսի և ո՞ր Ալեքսանդրիայի վրայ իր նաւատորմը կը պատրաստուի անգլիական դրօշ անկելու:

(Շարունակելի)

ԵՐՐՈՊԱՅԻ ԱՄՕԹԸ

Ահաւասիկ տարիէ մը իվեր Եւրոպա հանդիսատես կըլլայ ամենէն ամօթալից տեսարանի մը: Հազարաւոր այրեր, հազարաւոր կիներ ջարդուեցան ասիական թուրքիոյ ամեն նահանգներուն մէջ. իսլամական սանձարձակ մուսուլմանութիւնը կը սպառնայ ամբողջովին քանդել քրիստոնեայ ազգութիւն մը. աշխարհի ամենէն մեծ և ամենէն երեւելի քաղաքներէն մին, Կ. Պօլիս, կապրի սարսափի տիրապետութեան ներքեւ:

Այո՛, ահա տարի է մը իվեր կը տեսնեն այս վիճակը և գիտնազէտները չի կրցին բան մը ընել այս սարսափները բառնալու համար:

Պէտք չէ ուրեմն այսուհետեւ քաղաքակրթութեան յառաջդիմութեան և մարդկային անանցանելի իրաւանց խօսքը ընել. չխօսինք եւրոպական ամառնալ բարուց մասին իբր հակապատկեր ասիական բարբարոսութեան: Քիւրտ և թուրք ջարդուեցները կը հետեւին իրենց անասնական և վոյրենի բռնաւորութեան, իրենց արիւնարբու բնազդին. սակայն արեւմտեան գիւտնազէտները աւելի ատելի կը դառնան իրենց պաշտօնական կեղծութեամբ, իրենց ցուրտ անտարբերութեամբ և իրենց ծիծաղելի յարգական ձեւերով դաշնագրական սրբազնասուրբ կանոններու հանդէպ:

Արեւելեան խնդիրը բոլոր այս պարսկներուն համար ուսումնասիրութեան գաղտնի առարկան է: Թուրքիոյ մասին խել մը բանաձեւեր կան, որոնց պարտին նոքա

համակերպիլ -- այսպիսի հանգամանքներու մէջ ինչ պիտի ընէր Պ. վէրթէն, ինչ պիտի խորհէր Նէսէլթոմ, ինչ պիտի որոշէր լորտ Բալմէրսթօն, կամ, օսմանեան կայսրութեան ո՞ր կտոր պիտի առնէ Ռուսիա կամ Աւստրիա, ինչ փոխարինութիւն տալու է Յրանսաի, Գերմանիոյ և Անգլիոյ: Եւ գիւտնազէտներուն այս մտապետութեան միջոցին անգլի մոլորանգի խաբար վանի, Սամսօնի և Ատանաի մէջ կը բռնաբարէ, կը նահատակէ, կը սպաննէ քրիստոնեայ այրեր ու կիներ. և նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ արժանահաւատ վիաներ կը հաստատեն թէ մէկ գիշերի մէջ իրենց տան պատուհաններուն առջեւ անցած են գիտնազէտ լի վաթսուն սայլեր:

Ինչ իրաւունք ունինք զայրանալու, եթէ հայ յեղափոխականները տեսնելով որ իրենց ազգը կանոնաւորապէս կը ջնջուի, իրենց համբերութիւնը կը կորսնցնեն և եւրոպական գիւտնազէտներուն կը սպառնան լուծել իրենց վրէժը:

Արդարեւ եւրոպական տէրութիւններն են ամեն աւելի յանցապարտ. իրենց հաւաքական պաշտպանութեան տակ առին օսմ. կայսրութեան քրիստոնեաները, ուստի պատասխանատու են անոնց ապահովութեան համար. անոնք պարտաւանջ կըլլան, իրենց հանգիստաւոր խոստման կը դրժեն և ոճրագործ կը հանգիստանան, երբ կը թողուն որ քրիստոնեաները ջարդուին:

Կար ժամանակ մը, ուր Քրիստոնէաշինքը իրականութեան մը համապատասխանող բառ մ'էր, ուր բոլոր քրիստոնեայնները կը զգային այն նախադիմքը, որոց իրենց եղբայրները կ'ենթարկուէին հեթանոսներէն: Այդ ժամանակը անցած է: Ազգերը նոյնքան անտարբեր կ'երեւին այս սոսկումնաբուն հանգէպ, որքան իրենց կառավարութիւնները:

Հանրային կարծիքը յուզուեցաւ միայն Անգլիոյ մէջ, զոր վարժուած ենք իբր ամենէն ետաւեր երկիրը նկատել, ինչպէս նաև Չուիցերիոյ, այդ վնասն, բայց փաքիկ ու անզօր երկրին մէջ:

Միթէ՞ Յրանսայի մէջ արդէն անյիշատակ գնացեր ու մոռցուեր են այն աւանդութիւնները, որոնք մեր հայրենիքը ճնշեալներու պաշտպան կը հանգիստացնէին: Յրանսա աշխարհի վրայ լոկ հողի մաս մը չէ, այլ նաև պատմութիւն մը կը ներկայացնէ: Ուրիշին ձեռքով մեր հողին կտրատումը պատճառ մը չէ որ մենք ալ մեր ձեռքով մեր պատմութիւնը խեղանդամենք:

Երէկ խորհրդարանը վերաբացուեցաւ: Այնպիսի բազմաթիւ անդամներ, ի մէջ այլոց Պ. Տընիս Գօշէն, պիտի հարցնեն կառավարութեան թէ ինչ մտադիր է ընել: Հարկ է որ վճարական պատասխան մը տրուի և բաւ չսեպուին միայն քանի մը լաւ, անորոշ և գործնական ազգեցութենէ զուրկ խօսքեր:

Պ. Տընիս Գօշէն և իր բարեկամ

(*) Այն բացատրութիւնները, զոր արտաքին գործոց նախարար Պ. Հանթօթօ Յրանսական խորհրդարանին մէջ քանի մ'օր առաջ տուաւ արեւելեան խնդրոյ մասին, և զոր ընթերցողը կը գտնեն չրազրոյս առաջին երեսը, կը ցուցնեն թէ Սօլէյլի այս պահանջը ինչ առաժնայ գոհացում ստացաւ: (Ծ. խ.)

ները կաթօղիկ ու միապետական են: Թող չմոռնան միապետութեան աւանդութիւնները, որ յոյժ քրիստոնեայ էր և դարաւոր պաշտպան Արեւելքի քրիստոնէից:

Պէտք է որ վերջապէս գիտնանք թէ մեր գիւտնազէտութիւնը՝ 15 տարի Եգիպտոսի խնդրոյն վրայ ապարդիւն կերպով վիճարանելէ և Օբէրայի մէջ հանգիստաւոր ներկայացուցիչ կազմակերպելէ զատ բան մը ընելու կարող է:

Մեզ պիտի առարկուի թէ հայերէ առաջ Ալլաւ-Լօրէնցիներու մասին մտածելը քննելու է: Սակայն ինչ իրաւունքով պիտի բռնաբարենք մեր եղբայրներուն ճնշման դէմ, եթէ անպայայ միայնք այն վշտազին ազգակներուն, զոր գէպ մեզ կ'արձակեն ուրիշ ճնշեալներ:

Սօլէյլ

ՉԱՐՆ Ի ՖՐԱՆՍԱ

Նոյնիւ տ'Օրիւնս հայասէր թերթեր իր այս վերնագրով մէկ յօդուածը կը վերջացնէ այսպէս.

— Քանի որ Յրանքս — ուսու դաշնակցութիւնը եղած լինցած է և քանի որ կ'ընկնէ թէ Չարն կը հասկնայ դաշնակցութեան ծագող ամեն նուիրական յանձնառութիւններն ու պարտականութիւնները և կը թափանցէ մեր ցիւղին ու մեր ձգտումներուն ազնուականութեան, թող ներուի ազատ Փրանսայի մը առանց կեղծ ամօթի և ճամբարակութեան յայտնել իր կարծիք, զոր ինք գուշակիչ կը համարի: Այս դաշնակցութիւնը երկար կեանք պիտի ունենայ, եթէ կատարէ Արեւելքի մէջ աղքատ կալուած գործը, եթէ արդարութեան և պատժի սկիզբներով մը ուղղէ այն պատմական ցուազին տարիները, որոյ մէջէն անցան թուրք կայսրութիւնը: Իսկ եթէ զանցառու գտնուի իր պաշտօնին մասին արեւելքի մէջ, ինչ որ ալ ընենք, չպիտի կրնայ կոտորել իր պաշտօնը նաև արեւմուտքի մէջ: Այս երկու անխուսափելի պարագաները ամբապնդուած են իրարու հետ միեւնոյն երգումով և միեւնոյն դաշնագրով: Այն որ զանց կրնէ իր պաշտօնը ի վոսփոր, նոյնպէս անկարող պիտի ըլլայ զայն գործադրել Դանուբի, Նեղոսի, Հոնոսի ափունքին վրայ և Հոլլանտի մէջ և այն դաշնակցութիւնը, զոր ազատագրեալ և վերականգնեալ Յրանսա կը տօնէ այսօր, իր գէմ պիտի դառնայ ձախարհ հետեւանքներով, եթէ մեր պալմ ընկերէն չպահանջենք որ իր գիւտնազէտութիւնը դադրի արտօնելէ և պահպանելէ անվատ և ինքնուրոյն քրիստոնեաներու ջարդը:

ԹՈՒՐԳԻՈՅ

ՆՈՐ ՏՈՒՐԳԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Սուլթանին որոշմամբ իսլամ ժողովուրդը մարդ գլուխ հինգական դահեկան տուրք մը պիտի վճարէ, և ոչխարի տաճարը, ինչպէս նաև հանրային շինութեանց ու կրթա-

կան գործին յատկացնող տուրքը՝ որ
հարկերին 1/2 և 1 1/2 պիտի ա-
ւելնան:

Այս նոր տուրքը մօտ 1200000
տակայ հասոյթ մը պիտի բերեն,
որ պիտի յատկանայ զինուորական
պատրաստութեանց:

Առանց քննելու թէ այս ստակը
չէ՞ր կրնար յարմարագոյն պէտքերու
յատկացումի՞, մարդ կը փորձուի
հարցնելու թէ ինչ պատճառաւ մի-
այն խալամ ժողովուրդը կ'ենթադ-
րուի նոր տուրքերուն: Յայտնի է
որ այսպիսի կարգադրութիւն մը
պատճառ պիտի ըլլայ խաղաղութեան
զգոյնութեան, որք չ'են կրնար
ուրախ աչելով տ'անել որ քրիս-
տոնականները զերծ կը մնան այն-
քան ծանր հարկէ մը: Միւս կողմէ
սխալ տուրքերը Սուլթանի բոլոր
հպատակներէն առնուելէ՝ առանց
կրօնի և ցեղի խտրութեան, հա-
սոյթը շատ աւելի կարեւոր գու-
մարի մը պիտի համարէ:

Բայց ներկայ հանգամանքներուն
մէջ այս կարգադրութեան գլխաւոր
անպատահելութիւնը սա է որ տեղի
կուտայ աննպատակ մեղմութեան
բուռն գիտաւորութեանց մասին,
որուն թուրքիս կը հետեւի այս
նոր տուրքերը հաստատելով:

(Էնտէք. Պէյո)

ԼՕՐՏ ՏԸՖՐԻՆԻ ՄԷԿ ՃԱՌԸ

Բարեկի նախկին անգլիական
գեապանը Լօնտոնի Լօրտ քաղա-
քապետին տրուած հացկերոյթին
մէջ ճառ մը արտասանեց, ուր Անգ-
լիոյ և Ռուսիոյ միջև յարաբերու-
թեանց և Ապրիլ մէջ Ռուսիոյ յա-
ռաջխաղացութեան վրայ խօսելէ
յետոյ ըսաւ:

«Ծայրագոյն արեւելքի մէջ շա-
հերու ընդհարման վախի գալով,
անպատեհ է Ռուսիոյ հետ ենթա-
դրական պատերազմի մը ակնար-
կութիւն ընել: Թուրքիոյ հետ
այնպիսի յարաբերութիւններ կը
մշակենք որ աւելի վեճի և հակա-
ռակութեան կը նմանին և այս հա-
կառակութիւնը չէթէ Թուրքիոյ
կամ Թուրքիոյ հետ է, այլ
այն արեւմտեւոր պաշտպաննե-
րու խուճախէ հետ, որ երկրին վար-
չութիւնը նուազագոյն և Կոնս-
տանդուպոլսէ անոր վերաբերող պաշ-
տօնները:

Տայ Աստուած, որ ինչպէս կրի-
տէի համար պատահեցաւ, տէրու-
թեանց խեղճը և մարգասիքութեան
պատուիրանքը գրգեն զանաւ մի-
անալու Անգլիոյ հետ՝ դարմանելու
համար այն ամօթը, որով Եւրո-
պայի ատենը ծածկուեցաւ վեր-
ջերս:

Պէտք է միշտ խորհիլ որ Հայե-
րուն վիճակը չի կրնար բարւոքիլ
աշխարհագրական մասնաւոր կար-
գադրութեամբ մը, որ ֆիզիքայէս
անկարելի է, այլ ընտանեւ բարե-
նորոգումներով: Պէտք է որ Դրան
հպատակ ամեն քրիստոնէի, ինչպէս
ամեն մահմանականի կ'անըն ու
պատուութիւնները պաշտպանուին»:

ԵԳԻՊՏՈՍԻ ԽՆԴԻՐԸ

Լօնտոնի լրագիրներուն մեծա-
մասնութիւնը Լօրտ Պէրսֆօրտի
կարծիքին յարելով կը պահանջէ
որ անգլիական արտաքին գործոց
նախարարութիւնը յայտարարէ տէ-
րութեանց թէ Անգլիոյ պիտի կենայ
ու մնայ Եգիպտոսի մէջ:

Ս. Ճէյմս կուպէր կ'ըսէ որ Անգ-
լիոյ յայտարարելու է թէ ինք սխա-
լոր է կանխաւ ծանուցանելով որ
Եգիպտոսէն պիտի ելնէ:

Արեւելիս կը տեսնուի որ հակա-
ռակ նախկին յայտարարութեանց՝
Անգլիոյ պետական մարզիկ ընտ-
րիտաւորութիւն չունին որ մը Ե-
գիպտոսը պարպելու և իրենց այդ
արամադրութիւնն է որ արձագանք
կը գտնէ կարեւոր օրաթերթերու
մէջ:

Միւս կողմէ Թալմի Բարիզեան
թղթակիցը կը հաղորդէ թէ տե-
սակցութեան մը մէջ, զոր ինք
ունենցի է ֆրանսական քաղաքա-
գէտի մը հետ, այս վերջինը յայ-
տարարէր է թէ Ռուսիոյ, Ֆրան-
սոյի և Անգլիոյ միջև կատարեալ
համաձայնութեան մը միակ ար-
գելքը Եգիպտոսի խնդիրն է, որ
եթէ ամենուն նպատակը կերպով
մը կարենար լուծուիլ, եթէ, օրի-
նակի համար, Անգլիոյ հաւանէր
այնտեղ մնալ Եւրոպայի անունով
և ոչ հակառակ անոր կամքին,
ուրիշ քաղաքական խնդիրներու
լուծումը շատ պիտի դիւրանար:

Այսպէս զօրաւորներու հակա-
ռակ շահերուն զսկ'երթման տկար-
ները, մինչդեռ Հայերս կը սպասենք
որ Եւրոպայ համաձայնութեամբ
փորձ տայ մեր ցաւերուն:

ԹԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԱՄԱԿ ԲԻՆԿԵԱՆԷ
(Սկիզբնական)

«Արձակեցէք որ տեսնեմ զոր-
չափութիւն աւերածոյն երկրին իմոյ
Հայրենայ»

Բինկեանն ալ աւերակ դարձաւ
բոլորովին. Թուրք բարբարոս խու-
ժանը նախկին կոտորածոց ժամա-
նակ մեր կողմէ իրեն եղած խիստ
ընդդիմութեան վրէժը լուծելու
համար, վերջապէս այս անգամ կա-
ռավորութեան օգնութեամբ, սեպ-
3-4 ին Ալիայ քաղաքը բոլորովին
աւերակ դարձնելէ վերջը, 7 ին ևս
2-3000 բազմութեամբ յարձակե-
ցան մեր գիւղին վրայ, զինուած
բոլորն ալ, և սկսան նախ բոլոր
տուններն աւարի տալ և յետոյ ան-
խնայ կոտորել չինայելով ոչ երա-
խայի, ոչ ծերի և ոչ կանանց. առ
հասարակ ամեն իրենց ձեռքը ան-
ցածները թրէ կ'անցնէին. հարիւ-
րաւոր կանանց և մանկանց վայնա-
սուններն ամբողջ օգը կը թնդա-
ցնէին, կարծես դժոխքը կը տի-
րապետէր մեր գիւղին վրայ:

Սոյն գաղտնաբարոյ խուժանը
ասոնցմով ալ չը յաղենալով, սկսաւ
գիւղին շուրջ կողմը կրակի տալ.
կրակին ճարձատուով, թրէ ազատ-
ուողներուն ողբն ու աղաղակն, և
վայրենի խուժանի գոռումն ու գո-

չումն ամբողջ գիւղը չը շարժատա-
նէին. վերջապէս մի քանի ժամէն
ամեն բան մեռելական կերպարանք
ստացաւ, հոյակապ եկեղեցին և
երկեսու վարժարաններն և 200 տունէ
192 ը բոլորովին հրոյ ճարակ եղած
էին. 70-100 մարդ չարաչար սպան-
նուած, ի մէջ այլոց, Տէր Յակոբ
քահանան ևս, որուն նախ թեկը
կտրեցին և յետոյ ամբողջ մարմինը
այրեցին. շատ մը աղջիկներ և կի-
ներ պղծեցին և բռնաբարեցին.
առաջիններէ մի քանիներն ալ կա-
րենալով պրծիլ խուժանի ձեռքէն,
իրենց կուսական պատիւը պաշա-
պանելու համար, իրենք զիրենք
զոհեցին և եփրատ գետը նետուե-
լով խեղդուեցան:

Ահա այս է մեր համբաւաւոր և
իւր չը շարժալից մէջ մէկ հատիկ
գիւղին այժմեան տխուր վիճակը.
մնացած խեղճ ու թշուառ ժողո-
վուրդը 8-10 տան մէջ ամբողջութե-
մբ վերջին օրհասին կ'սպասէ բոլո-
րովին մերկ և անօթի. և արգէն
հիւանդութիւնն ալ սկսած էր մեր
մէջ:

Պուրկադ, 26 Հոկտ.

Գաղթականութեան հոսանքը
երթալով նուազելու վրայ է. Կ.
Պուլէն եկողներ խիստ ցանցաւ են.
միայն տեղէ տեղ փոխադրուողներ
կան, վառնայէն Պուրկադ, Պուր-
կաղէն ֆիլիպէ ևն. որոնք հացի
մը ի խնդիր կ'երթան, կուգան շա-
րունակ:

Տասն օր առաջ Ֆիլիպէէն տեղս
ժամանեց Արթ. Տ. վաղինակ վրդ.
Սիսակեան, որոյ առաջին գործն
եղաւ այցելել եկեղեցին ու վար-
ժարանը. հարցաքննեց աշակերտ-
ները և ուշադրութեամբ գիտեց
գասարաններն ու տղայոց աշխա-
տութիւնները և զս' սրտով մեկնե-
ցաւ վարժարանէն:

Արթ. Հայր Սուրբ Ժողովրդեան
փափաքին համեմատ անցնալ կի-
րակի հանգիստը պատարագ մա-
տոյց և այս առթիւ օծեց եկեղեց-
ւոյ այն մասերը, որ օծուած չէին
տակաւին. Եկեղեցին լի էր բազ-
մութեամբ, որոյ մէջ կային շատ
օտարականներ: Շատ լաւ տպաւո-
րութիւն ըրաւ Ն. Արթմանպատ.
ուութեան քարոզը, որով յորդորեց
ժողովուրդը աշխատել յօգուտ աղ-
գին, խրախուսեց ի ջանասիրու-
թիւն և անվհատ գործօնեցութիւն
այսպիսի անձկալից ժամանակի մէջ
և իր ուրախութիւնը յայտնեց վար-
ժարանին բարեկարգ վիճակին ու
աշակերտաց տրուած աղագային բար-
ւոք գաստիարակութեան համար:

Կարօտ գաղթականաց վիճակին
բարւոքման ինպատու ժողով մը
գումարուեցաւ Հայր Սուրբին նա-
խաձեռնութեամբ և վերակազմուե-
ցաւ գաղթականաց ցանձնաժողո-
վը, որոյ մէկ մասը պակսած էր,
մէկըսնի անդամներու ասկէ մեկ-
նելովը:

Մ. Գերունի

ՅԵՂԱՓՈԽԱՆ ԽՈՐՏՈՒՄՆԵՐ
ԹՈՒՐԻՔ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ

Թուրք կառավարութիւնը Կ.
Պուլսոյ զինուորական-բժշկական
վարժարանին մէջ խուզարկութիւն
մը կատարելով գտեր է երկու յե-
ղափոխական գրութիւններ, որոց
օրինակները կանխաւ ցրուած էին:
Գրութիւններէն մին ոտանաւոր մ'է
Սուլթանին դէմ գրուած և դպրո-
ցականներուն պատրաստականու-
թիւնը կը յայտնէ հերոսական մա-
հաւաճ մեռնելու: Երկրորդ գրու-
թիւնը կը բողոքէ նախորդ եղար-
գոյ ֆիլիպք խախտ բաշախ վերս-
տին պաշտօնի կոչուելուն դէմ,
այն մատնիչ Սաիտին, որ 20 տա-
րի առաջ իբր Սուլթանի զբաղիւր
ջնջել տուեր է նորածին օսմանեան
սահմանադրութիւնը:

Գրութիւնը կը պահանջէ նաեւ
որ եպարքոսական պաշտօնը յանձ-
նուի Եգիպտոսի օսմ: պատուիրակ
Մուխթար բաշախին կամ ֆեհաւիլ
բաշախին. վերջին պարագային մէջ
Մուխթար բաշախ պարագայեւ կար-
գուելու է: Բոլոր կարեւոր պաշ-
տօնները յանձնուելու են նոր, ար-
ժանաւոր մարդերու:

Սակայն ամենէն առաջ պաշտօ-
նանկ ըլլալու են ծովային գործոց
նախարար Հասան բաշախ և ներքին
գործոց նախարար Մէմուտ Հա-
շա: Այս վերջինին համար գրու-
թեան մէջ ըսուած է «այն գողը
որ անամօթաբար իւրացուց Ամա-
սիոյ սուրբ մզկիթներէն մեկուն
մէկ թանկագին գորգը»: վերջա-
պէս վարժարանին ուսանողները ի-
րենց այդ յայտարարութեամբ
խիստ կերպով կը դատապարտեն
այն լրտեսի գրութիւնը, որ կը
տիրէ բոլոր երկրին մէջ և որ
Թուրքիոյ համար բոլոր չարքնե-
րուն մեծագոյն է, աւելի աղետա-
լի քան քօլէրան, որոյ դէմ իրենք
իբր բժշկել միջոցներ ունին մաքա-
ռելու, մինչդեռ բոլորովին անզօր
են լրտեսութեան համաճարակին
դէմ:

Կառավարութիւնը կը ջանայ
գաղտնի պահել այս յեղափոխական
երկու գրութեանց գիւտը, զոր
վտանգաւոր նշան մը կը համարին
երազել և լուրջ անձեր:

ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸ

Տիար Կ. Տաքէս վերստին սկը-
սած է ֆրանսերէն լեզուով ԼԱՎՈՐ-
նիս անուն թերթ մը հրատարակել
Աթէնքի մէջ:

Թերթը պիտի խօսի գլխաւո-
րապէս Արեւելքի գործերուն վրայ
և կը խոստանայ ջատագով ըլլալ
միշտ ճշմարտութեան:

Լիայոյս ենք որ մեր հայրենա-
կեցը, որ իբր թուրք կառավարու-
թեան պաշտօնեայ երկար ժամանա-
կաւ թռնեցած է Թուրքիոյ գոր-
ծերը մօտէն ուսումնասիրելու, պի-
տի կարողանայ օգտակար հանգի-
սանալ լրագրական ասպարէզին մէջ:
Ի սրտէ յաջողութիւն կը մաղ-
թենք մեր պատուարժան պաշտօ-
նակցին:

Թերթին բաժնեգինն է տարե-
կան 50, վեցամսեայ 30 ֆրանք:
Հասցէն է

Direction du journal L'AVENIR
Rue d'Hermès
Grèce
ATHENES

